



Երևան, 31 մարտի 2017թ.

ՄԱՍՈՒԼԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՐԾԻՔԻ ՀԱՐՑՈՒՄ

Երկիր Մեդիա հեռուստաալիքի նախաձեռնությամբ և ֆինանսավորմամբ ս.թ. մարտի 18-27 ընկած ժամանակահատվածում ՀՀ-ում իրականացվել է հասարակական կարծիքի ուսումնասիրություն: Ուսումնասիրության նպատակն է բացահայտել և վերլուծել Հայաստանի բնակչության հասարակական-քաղաքական տրամադրություններն ու կարծիքները 2017թ.-ի խորհրդարանական ընտրությունների շեմին: Ծրագիրն իրականացրել են Հայկական սոցիոլոգիական ասոցիացիան և BS/The Gallup Organization մասնագիտացված կազմակերպությունները:

Համապետական ներկայացուցչական հանրային կարծիքի հարցմանը մասնակցել է համապետական ընտրություններում ընտրելու իրավունք ունեցող Հայաստանի 1005 չափահաս բնակիչ: Հարցազրույցներն անցկացվել են ընտրողի տանը՝ «դեմ առ դեմ» հարցման սոցիոլոգիական մեթոդով:

Հարցվածների արձագանքների մակարդակը կազմել է 70%, հարցման արդյունքների սխալի լուսանցքը չի գերազանցում +/- 3,2%, տվյալների վստահության մակարդակը 95%:

Հարցման ժամանակ ընտրողների 50%-ը նշել է, որ հաստատապես մասնակցելու է ընտրություններին, իսկ 35%-ը՝ հավանաբար կմասնակցի: Ընտրություններից մի քանի օր առաջ ընտրողների առավել մեծ աջակցությունն են վայելում երկու կուսակցություններ՝ Հայաստանի Հանրապետական կուսակցությունը, որին պատրաստ է ձայն տալ ընտրողների 30,2%-ը (կամ հավանական ընտրողների 33,0%-ը) և «Ծառուկյան» դաշինքը, որի օգտին պատրաստ է քվեարկել ընտրողների 29,1%-ը (կամ հավանական ընտրողների 29,4%-ը): Քանի որ այս անգամ քվեարկության ժամանակ ընտրողները նշելու են նաև ընտրատարածքներում տարբեր կուսակցություններից ընդգրկված այսպես կոչված ռեյտինգային մասնակիցներ, ապա մեր հարցաթերթում նույնպես նման հարց էր տեղադրվել ու ստացվել էին պատասխաններ, որոնց համաձայն ՀՀԿ-ի բոլոր ռեյտինգային թեկնածուներին տրվել է՝ 31,7%, «Ծառուկյան» դաշինքի թեկնածուներին՝ 21,8% և մնացած յոթ

կուսակցություններին ու դաշինքներին 3-8-ական տոկոսներ: Քվեարկության ժամանակ հասկանալի է, որ այս ձայները կգումարվեն համապատասխան կուսակցությունների ստացված քվեներին:

Հարցման արդյունքները ցույց են տալիս, որ 3-4 այլ կուսակցություն ու դաշինք, որոնք վայելում են ընտրողների համեմատաբար ավելի փոքր մասնաբաժնի աջակցությունը, նույնպես կարող են անցնել Ազգային Ժողով: Դրանք են՝ «Հայ հեղափոխական դաշնակցություն», «Հայկական վերածնունդ» կուսակցությունները և «Ելք» դաշինքը:

Հարցման արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ երկու առաջատար կուսակցությունների սոցիալ-ժողովրդագրական պատկերները բավականին մոտ են, և այդ երկուսը հիմնականում մրցում են միմյանց հետ, մինչդեռ ավելի փոքր կուսակցությունների ընտրողների պատկերները տարբեր են: Հավանական ընտրողների զգալի մասը (63,4%) կողմնորոշված է, թե ում է ընտրելու, իրենց վերջնական ընտրության ձևավորման համար գրեթե ժամանակ չի մնացել:

Gallup կազմակերպության ներկայացուցիչ, դոկտոր Ռասա Ալիսաուշկիենեն նշում է, որ հայ ընտրողները բավական մեծ հետաքրքրություն են ցուցաբերում գալիք ընտրությունների հանդեպ. նրանց 50%-ն ասել է, որ հաստատ մասնակցելու է ընտրություններին, իսկ 35%-ը նշել է, որ «հավանաբար կմասնակցի»: Ընտրողների 24%-ը մասնակցության մասին վերջնական որոշում դեռ չեն կայացրել:

Հարցման արդյունքները վկայում են այն մասին, որ մեր բնակչության համար ամենամտահոգիչը շարունակում են մնալ սոցիալ-տնտեսական խնդիրները, որոնցից առաջնայինը՝ աշխատատեղերն ու կենսապայմաններն են:

Baltic Surveys /The Gallup Organization-ը և Հայկական սոցիոլոգիական ասոցիացիան համագործակցում են 2005թ.-ից և Հայաստանում հանրային կարծիքի բազմաթիվ ուսումնասիրություններ են իրականացրել՝ այդ թվում ելքի հարցում (Exit Poll) 2013թ. նախագահական ընտրությունների ժամանակ: Համապետական ընտրությունների պաշտոնական տվյալները շատ բարձր ճշտությամբ հաստատել են կատարված ուսումնասիրությունների արդյունքները:

**ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՄԲՈՂՁԱԿԱՆ
ՏԵՔՍՆ ՈՒ ԹՎԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՔ ԳՏՆԵԼ**

www.asa.sci.am և www.gallup-europe.be

ԿԱՅՔՈՒՄ

Օրագրի ղեկավարներ.

Դոկտոր Ռասա Ալիսաուշկիենե, Baltic Surveys/The Gallup Organization
(www.gallup.com).

Gallup-ը (The Gallup Organization) հանրային կարծիքի հարցումների և խորհրդակցության համաշխարհային առաջատար կազմակերպություններից է, ժամանակակից հանրային հարցման ծառայության ոլորտի «հիմնադիր հայրերից» մեկը: Դոկտոր Ջորջ Գելափին այն հիմնել է 1935թ.-ին ԱՄՆ-ում, որը հետագայում վերաճել է միջազգային առաջատար ընկերության:

“Baltic Surveys”-ը ամերիկյան Gallup Ինստիտուտի մասն է, առաջին մասնավոր, անկախ, հանրային կարծիքի ուսումնասիրության ընկերությունը Լիտվայում, որը հիմնադրվել է 1992թ.-ին, որպես Gallup-ի Լիտվայի գրասենյակ: Այն ESOMAR-ի, ԱՄՆ-ի առևտրային պալատի, Բրիտանական առևտրային պալատի, IAPC-ի և այլ միջազգային կազմակերպությունների անդամ է:

Baltic Surveys/The Gallup Organization-ը 25 տարի իրականացրել է հանրային կարծիքի հարցումներ և շուկայի վերլուծության ծրագրեր Կենտրոնական և Արևելյան Եվրոպայում և ԱՊՀ երկրներում (Հայաստան, Բելառուս, Մոլդովա, Ղազախստան, Ղրղզստան, Վրաստան, Ադրբեջան, Ուկրաինա, Ռուսաստան): Ընկերությունը ներկայացված է ESOMAR-ում 1992թ.-ից: Դոկտոր Ռասա Ալիսաուշկիենեն հանդիսանում է Gallup Europe-ի խորհրդի անդամ:

Պրոֆ. Գևորգ Պողոսյանը, Հայկական սոցիոլոգիական ասոցիացիայի (ASA) նախագահն է (www.asa.sci.am):

Հիմնադրվելով 1992թ.-ին՝ ASA-ն Հայաստանի հետազոտական առաջին և առաջատար կազմակերպություններից է: ASA-ն Միջազգային սոցիոլոգիական ասոցիացիայի (ISA), Եվրոպական սոցիոլոգիական ասոցիացիայի (ESA) անդամ է, ինչպես նաև ESOMAR-ի անդամ է:

ASA-ն արդեն 25 տարի զբաղվում է հանրային կարծիքի ուսումնասիրությամբ և իրականացնում է սոցիոլոգիական հարցումներ տարբեր բնագավառներում՝ քանակական ու որակական սոցիոլոգիական հետազոտություններ, հանրային կարծիքի հարցումներ, քվեարկության օրվա ելքի հարցումներ (Exit Poll), շուկայի ուսումնասիրություններ, ԶԼՄ-ների հարցումներ և այլն:

Պրոֆ. Գևորգ Պողոսյանը սոցիոլոգիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր է, ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, նախագահության անդամ, բազմաթիվ միջազգային գիտական կազմակերպությունների ու մասնագիտական ամսագրերի խմբագրական խորհուրդների անդամ, 40 գրքերի ու մենագրությունների, ինչպես նաև մոտ 200 գիտական հոդվածների հեղինակ: